

Արսեն Է. Հարությունյան

Պարմ. գիյր. թեկնածու

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Եվ նմանօրինակ մյուս վիճակները*

Բանալի բառեր – Տաթևի վանք, Ս. Պողոս–Պետրոս եկեղեցի, շրջագիր ծածկագրություն, վիճակագիր, խաչքար, վերծանություն, այցելու–նվիրատու, եպիսկոպոս:

Մուտք

Ծածկագրությունը կամ գաղտնագրությունը խոր արմատներ ունի ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրավոր–մշակութային ժառանգության մեջ¹: «**Կրիպտոգրաֆիա**» (cryptography, հուն. $\chi\rho\upsilon\pi\tau\omicron\varsigma$ – գաղտնի և $\gamma\rho\alpha\phi\acute{\eta}$ – գրություն) միջազգային անունով հայտնի այս երևույթի հիմքում տարբեր իրողություններն ու անունները գաղտնի ու անեղծ պահելը, դրանք տգետ մարդկանց վայրագությունից ապահովագրելն ու սերունդներին ավանդելն էր, ինչը քրիստոնեության մեջ դրսևորվեց անհատի՝ հիշման արժանի լինելու համար անունները չեղծելու ու չյուրացնելու մտավախությամբ, քանզի «...որևէ անձնանվան գրանցում ինքնին ենթադրում է հիշվելու ակնկալիքը»²:

Դեռևս Ք. ա. V հազարամյակից Հայկական լեռնաշխարհում սկսում է ձևավորվել պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որն ավելի ուշ տարածվում է նաև Սիրիայում, Պաղեստինում և հարակից այլ երկրներում³: Հայ իրականության մեջ դրա վաղագույն օրինակները ժայռապատկերներն են (պետրոգլիֆներ)՝ մարդակերպ, կենդանակերպ, երկնային լուսատուների ու երկրաչափական մարմինների տեսքով խորհրդանիշ–պատկերները, որոնց շնորհիվ մարդը կարողացել է դրոշմել իր մտքի առաջին

* Հոդվածն ընդունվել է տպագրության 17.07.2021:

1 Աշխարհի տարբեր ժողովուրդների գրավոր մշակույթում պահպանված ծածկագրերի և դրանց վերծանության սկզբունքների վերաբերյալ կա մասնագիտական հսկայական գրականություն: Սի քանիսին ծանոթանալու համար տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Books_on_cryptography (մուտք 20.06.2021):

2 **Հարությունյան Խ.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր., 2019, էջ 173:

3 Տե՛ս **Մովսիսյան Ա.**, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 9:

«գիրը»՝ արտահայտելով սեփական աշխարհայացքն ու ընկալումները⁴: Ինչ վերաբերում է եգիպտական պատկերային հիերոգլիֆներին, ապա դրանք կիրառելի էին առնվազն Ք. ա. III հազարամյակից, իսկ ավելի պարզ ու գծային օրինակները՝ այսպես կոչված «դեմոտական» գրերը, շրջանառության մեջ են մտել միայն Ք. ա. VIII դարում⁵: Հետագայում գաղափարագիրը կիրառվել է նաև ասուրա-բաբելոնյան և բիայնական (Վանի թագավորության) սեպագրության մեջ, բայց որպես սղագրության միջոց, քանի որ բառն ընկալվում էր իբրև «սրբազան հասկացություն», և վանկային գրության (տողադարձի) փոխարեն կիրառվել է համապատասխան գաղափարագիրը⁶:

Հայերեն վիմագրերում գաղափարագրերին փոխարինելու եկան **ծածկագրերն** ու **փակագրերը**: Տեղի խնայողության համար վիմագրերում կիրառվեց նաև **կցագրությունը**⁷: Հին և միջնադարյան գրավոր խոսքում տեղ գտած այս երևույթներն ուսումնասիրողները մեկնաբանում են ոչ միայն իբրև տեղեկություններ ու անուններ գաղտնագրելու միջոց, այլև գրչախաղ՝ «...կազմված անմեղ նպատակով»⁸: Հայերեն գրավոր սկզբնաղբյուրներում դրանք հանդիպում են դեռևս վաղ միջնադարում. լավագույն օրինակներից է ներկայումս Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ավանի Կաթողիկե Ծիրանավոր եկեղեցու երկլեզվյան (հայերեն-հունարեն) ծածկագիր արձանագրությունը՝ թվագրված VII դարի առաջին կեսով⁹:

Սույն հրապարակման հիմքը պատմական Սյունյաց աշխարհի Ծղուկ գավառի հոգևոր-մշակութային առավել հայտնի կենտրոններից մեկի՝ Տաթևի վանքի **շրջագիր ծածկագրությունն** է, որը հանիրավի դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Նախքան խնդրո առարկա վիմագիրը ներկայացնելը նշենք, որ հայկական ծածկագրությունը՝ իբրև առանձին գիտաճյուղ, դեռևս 19-20-րդ դդ. արժանացել է հայ և օտարագրի հետազոտողների ուշադրությանը (Մ. Բրոսսե, Գ. Տեր-Մկրտչյան, Հր. Աճառյան, Ս. Տեր-Ավետիսյան, Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Կ. Ղաֆադարյան, Ստ. Մելիք-Բախշյան և այլք), բայց առավել հանգամանորեն այն ուսումնասիրել է պատմաբան, աղբյուրագետ **Աշոտ Գ. Աբրահամյանը**, որի՝

4 Տե՛ս **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.**, Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հատ. 4. Ժայռապատկերներ, պրակ I, Եր., 1970, էջ 6:

5 Տե՛ս **Короствовцев М.**, Египетский язык, М., 1961, էջ 19-20, **Robinson A.**, The Story of Writing. Alphabets, Hieroglyphs & Pictograms, New Edition, London, 2013, էջ 21-35:

6 Տե՛ս **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 82-83:

7 Նշենք, որ դեռևս 2-րդ դարում կցագրությունը սկսել է կիրառվել լատիներեն վիմագրերում (տե՛ս **Федорова Е.**, Латинская эпиграфика, М., 1969, էջ 63, րև. 28, 63):

8 **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 244:

9 Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Եր., 1945, էջ 7: Հմնտ. **նույնի** Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Եր., 1975, էջ 190-191:

«Հայկական ծածկագրություն» խորագրով մենագրությունը քննվող երևույթը համակողմանիորեն ներկայացնող հաջողված գործերից է¹⁰:

Նկատենք, որ ինչպես վիճակագրերում, այնպես էլ մատենագրության մեջ փաստագրվել են տարբեր սկզբունքներով վերծանվող ծածկագրեր: Ի դեպ, վիճակագրերում վկայված ծածկագրերը քանակապես գիշում են մատենագրությանը ավանդված օրինակներին, ուստի յուրաքանչյուր նորահայտ վիճակագիր ծածկագրության հանրայնացումը մեծապես կարևորվում է նաև այս տեսանկյունից:

Ա. Տաթևի վանքի նորահայտ ծածկագիրը

Տաթևի վանքի շրջագիր ծածկագրությունը պահպանվել է համալիրի գլխավոր՝ **Ս. Պողոս-Պետրոս** եկեղեցու հարավային պատի գրեթե ձակտոնային մասում՝ արտաքուստ, կենտրոնական լուսամուտի արևմտյան կողմում (նկ. 1): Մասամբ եղծված եռատող արձանագրության վերնամասում՝ կարմրաներկ գույգ խաչաքանդակներին կից, թվականն է, իսկ խաչաքանդակներից վեր և բուն արձանագրությունից աջ անունների համառոտ հիշատակություններն են:

Տաթևի վանքի վիճակագրերի առաջին հրատարակիչներից **Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանը**, որը 1904 թ. վանքից բազմաթիվ վիճակագրեր է ընդօրինակել, հրատարակել է քննվող վիճակագրի միայն թվականը՝ «ԹՎ. 22Զ. (1337)», և հիշատակված անձնանուններից մեկը՝ «Կոլիճան», իսկ բուն արձանագրության վերաբերյալ նշում է, որ «...միև մասերը չեն կարդացում, որովհետև խոնաուրթինից եղծուած են»¹¹: Ավելի ուշ վիճակագրագետ **Սեդրակ Բարխուդարյանը**, անտեղյակ Մեսրոպ Մագիստրոսի հրատարակությունից, վիճակագիրն ընդգրկել է «Դիվան հայ վիճակագրության» մատենաշարի երկրորդ պրակում հետևյալ նկարագրությամբ. «արտաքուստ. հարավային պատի վերին մասում, պատուհանի արևմուտքում մի քարի վերևում երկու խաչ և տակին՝ երկու փոքր քարերի վրա, շիտակ և թարս գրերով»¹²: Ս. Բարխուդարյանը ներկայացրել է շրջված տառերով արձանագրության մասնակի գրչապատկերը և դարձյալ միայն թվականը՝ «ԹՎ. :2ԾԸ: (1309)» (չնայած որ գրչագրում «22Ը.» (1339) է), իսկ վերծանության փոխարեն ծանոթագրել է հետևյալը. «Արձանագրությունն ան-

10 Տե՛ս Արրահամյան Ա., Հայկական ծածկագրություն, Եր., 1978:

11 Մեսրոպ արք. Տեր-Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղէմ, 1938, էջ 45, արձ. 25, 26: Հմմտ. Նույնի Արձանագրութիւններ Տաթևի վանքի եւ շրջակայքի, «Յօդուածների ժողովածու», հրատարակութեան պատրաստեց՝ Գ. Տեր-Վարդանեան, Ս. Էջմիածին, 2010, էջ 291, արձ. 13:

12 «Դիվան հայ վիճակագրության» (այսուհետ՝ ԴՀԿ), պրակ II, Գորիսի, Սիսիանի և Դափանի շրջաններ, կազմեց՝ Ա. Բարխուդարյան, Եր., 1960, էջ 17, արձ. 14:

մատչելի տեղում է, հեռադիտակով ենք դիտել և ճշտությանը երաշխավորել չենք կարող»¹³:



Նկ. 1. Արձանագրության տեղը Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատին (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2020 թ.)


Նշենք, որ բարձրադիր ու անմատչելի տեղում փորագրված լինելու պատճառով արձանագրությունը հնարավոր է վերծանել միայն որակյալ լուսանկարի միջոցով, որը, ըստ ամենայնի, նախկինում չի արվել: Տաթևի վանքի վիմագրերի ուսումնասիրության ընթացքում վերջերս մեզ հաջողվեց վերծանել այս արձանագրությունը, ինչի շնորհիվ հստակեցվեց ոչ միայն թվականը, այլև բուն վիմագիրը, որն աջից ձախ գրությամբ շրջագիր ծածկագրություն է¹⁴: Այսպես՝ գույգ խաչաքանդակների ստորին ձախ կողմում թվականն է՝ «ԹՎ. ԶԶԶ. (1537)», խաչերի վերնամասում հիշատակագրված է «Կոլիճան» (կամ, որ քիչ հավանական է, «Կոլիճան»), ներքևում՝ «Տերին»¹⁵ անունը, իսկ բուն ծածկագրությունը բովանդակում է հոգևոր այրերի՝ Տեր Աստոն, Տեր Ստեփանոս և Հայր Կիրակոս եպիսկոպոսների (բնագրում՝ իպիսկոպոսներ)

¹³ Նույն տեղում, էջ 17:

¹⁴ Վերջերս Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայկական և արևելաքրիստոնեական արվեստին նվիրված 7-րդ սեմինարի շրջանակներում առիթ ենք ունեցել ներկայացնելու «Տաթևի վանքի վիմագրերը և մշակութային ժառանգությունը» խորագրով առջանց դասախոսությունը, որի ընթացքում խոսել ենք նաև խնդրո առարկա ծածկագրության մասին (տե՛ս **Harutyunyan A.**, Epigraphs and Cultural Heritage of Tatev Monastery, Lecture at the 7th Seminar on Armenian and Eastern Christian Art, Ca' Foscari University of Venice, 16.03.2021):

¹⁵ Հր. Աճառյանը հիշատակում է **Տերին** արական անունը, որը, ըստ նրա, ունի հունական ծագում և մեկ անգամ հանդիպում է 12-րդ դարում (տե՛ս **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Եր., 1962, էջ 143):

անունները: Նրանց հիշատակին էլ թերևս կերտվել են գույգ խաչերը, քանզի, խաչքարային արձանագրությունների համաձայն, «Սուրբ Նշանը» հիշատակվածների հոգու փրկության, այսինքն՝ մահը հաղթահարելու և անմահություն ստանալու համար պիտի բարեխոս լինի Ամենակալի առջև¹⁶: Այսպիսով՝ ունենք հետևյալ վերծանությունը:




Նկ. 2ա, բ. Տաթևի վանքի շրջագիր ծածկագրությունը, 1537 թ. (լսնկ. և գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2020 թ.)

ԿՈԼԻԾԱՆ, / ՏԵՂԻՆ:
ԹՎԻՆ՝ ԶԶԶ. (1537):
ԱՅՍ Է ՆՇԱՆ ՓՐԿՈՒԹԻԼԻՆ՝ ՀՈ/ԳՈՑ
ԻՊԼԻՍԿՈՂՊՈՍԱՑ՝ ՏԷՂԻ ԱՆՏՈՆԻՆ՝, /
ՏԷՂԻ ԸՍՏԵՓԼԱՆՈՍԻՆ՝, ՀԱՅՐ ԿԷՂԼԱԿՈՍԻՆ:

Նկատենք, որ բուն վիմագրից առանձին նշված անուններն ու թվակա- նը շիտակ գրերով են, շրջագիր, այսինքն՝ հայելային գրչությամբ է միայն եռատող արձանագրությունը (նկ. 2ա, բ), բայց այն, որ շրջագիրը ևս նույն գրչի ձեռքով է գրվել, կասկած լինել չի կարող, քանի որ տառերի հնա- գրությունն այդ է փաստում: Ավելին՝ այս արձանագրությանն իր հնագրա- կան առանձնահատկություններով նման է հարևանությամբ գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային պատի 1532 թ. ընդարձակ նվիրատվական վիմագիրը, որը շարունակվում է նույն եկեղեցու արևել- յան պատին (նկ. 3ա, բ): Վիմագրի վերջում գրիչը հիշատակագրել է նաև իր անունը՝ «Ներսէս սուտանուն արեղայ»՝ գալիք սերունդներին ավան- դելով մատենագրությունից հայտնի հետևյալ տողերը. «ձեռս փթի եւ հող դառնայ, գիր յիշատակ առ ձեզ մնայ»¹⁷: Մեծ հավանականությամբ, հենց նույն Ներսէս արեղան է տարիներ անց փորագրված ծածկագրության հեղինակն ու գրիչը:

16 Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառնությունը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 316:
17 ԴՀԿ, պրակ II, էջ 27, արձ. 47:



Նկ. 3ա, բ. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու
նվիրատվական վիմագիրը, 1532 թ.
(լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2015 թ.)

Արդ, իսկ ովքե՞ր են վիմագրում հիշատակված եպիսկոպոսները, որոնց հոգու փրկության համար սուրբ Նշանին, այսինքն՝ Ամենակալի խորհրդանիշ խաչին ապավինող պատգամը ծածկագրվել է: Մեր կարծիքով՝ վիմագրում հիշատակված հոգևոր հայրերն **այցելու-նվիրատուներ** են, որոնք ուխտի են գնացել Տաթևի վանք և որոշակի նվիրատվություն արել, որի դիմաց եկեղեցու որմերի «կենաց մատյան»-ում հիշատակագրման են արժանացել: Իհարկե, չենք բացառում, որ հիշատակված եպիսկոպոսները կարող էին վանքի սպասավորները լինել, սակայն դա քիչ հավանական է:

Վիմագիրը, ըստ ամենայնի, ծածկագրվել է նվիրատուների ցանկությամբ, որոնք ձգտել են գաղտնի մնալու և պաշտպանելու իրենց անունները «կենաց մատյան»-ից ջնջվելու վտանգից: Հավանական է, որ հիշատակված հոգևոր հայրերն ուխտի են եկել Տաթևի վանքապատկան **Գեղարքունիքի** հոգևոր թեմից, որի երբեմնի իրավունքները տեղի մեկիքներն ու տանուտերերը Տաթևի վանքում պահվող մի հին փաստաթղթի հիմամբ 1513 թ. վերահաստատել են¹⁸: Մեր այս տեսակետի օգտին է վկայում նաև վերոնշյալ 1532 թ. վիմագիրը, ըստ որի՝ Գեղարքունիքի մի խումբ իշխող այրեր ուխտի են գնացել Տաթև և պայման դրել՝ Մազրայից մինչև Կոթ ըն-

18 Տե՛ս Ալիշան Ղ., Սիսական. տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 34: Տե՛ս նաև Բարխուդարյան Ս., Գեղարքունիքի մեկիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», հատ. 8, Եր., 1967, էջ 192:

կած գյուղերի բնակիչները պետք է վանքին տարեկան Բ. (2) կապալ (որպես տուրք) ձեռն տային՝ իբրև «լուսացու իւրեանց հոգոյն»¹⁹:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արևելյան պատի՝ 16-րդ դարով թվագրվող մեկ այլ վիճագրում էլ հիշատակված են Գեղարքունիքից Տաթևի վանք ուխտի գնացած քահանաները՝ «Պողոս Մազրեցի, Մովսէս Կարմինջոյ, Վարդան²⁰ Տապ (՞), Ղուլիկ Գետկայ»²¹:


Բ. Շրջագիր ծածկագրության վերծանության սկզբունքը

Ի՞նչ սկզբունքով է վերծանվում շրջագիր ծածկագրությունը: Ուսումնասիրողներից **Հր. Աճառյանն** ու **Ա. Աբրահամյանը** նշում են, որ նմանօրինակ ծածկագրության վերծանությունը հնարավոր և դյուրին է առաջին հերթին հայելու անդրադարձման միջոցով, կամ պարզապես պետք է գիրը պատճենել թափանցիկ թղթի վրա և, պահելով լույսի դիմաց, վերծանել այն²²: Շրջագիր ծածկագրության դեպքում տառերը պատկերվում են շրջված, հիմնականում հայելային եղանակով, ինչի հետևանքով ընթերցումը դարձել է նաև աջից ձախ: Սա համադրելի է արձանագիր կնիք-մատանիների կամ կնքադրոշմների հետ, երբ դրոշմելուց հետո միայն գրերը ստացել են կանոնավոր տեսք: Վիճագրերում հանդիպում են նաև հայելային, բայց ձախից աջ գրությամբ, գլխիվայր կամ բառի մեջ միայն մի քանի տառերի²³ շրջված գրության դեպքեր (Հաղբատ, Թալին, Թանահատ և այլն)²⁴:

Շրջագիրը հաճախ զուգադրվում է աջից ձախ գրությամբ ծածկագրության հետ, որպիսիք հայտնի են Արծվանիկից²⁵, Լմբատավանքից²⁶, նաև ձեռագիր աղբյուրներից, մինչդեռ աջից ձախ գրության դեպքում տառերը չեն շրջվում, այլ ընթերցվում են տողի վերջից՝ աջից ձախ ուղղությամբ: Ի դեպ, ինչպես ավելի վաղ նկատել է նաև Ա. Աբրահամյանը, աջից ձախ գրությունը, ըստ ամենայնի, դասավանդվել է միջնադարյան դպրոցներում, ինչի մասին է վկայում 1584-1589 թթ. Եվդոկիայում Անդրեաս սարկավագի գրչագրած ձե-

19 ԴՀԿ, պրակ II, էջ 27, արձ. 47:
20 Նախորդ հրատարակիչը **Վարդան** է կարդացել:
21 ԴՀԿ, պրակ II, էջ 17, արձ. 18:
22 Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 669, **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, էջ 268:
23 Վիճագրագետ Թեմո Ջոզուայի հաղորդմամբ վրացերեն վիճագրերում ևս երբեմն հանդիպում են հայելային գրությամբ առանձին տառեր կամ բառեր (բայց ոչ ամբողջ վիճագիրը): Թեև վրաց ուսումնասիրողների գնահատմամբ դա փորագրիչների անվտանգության, գրագետ չլինելու հետևանք է, սակայն, Թ. Ջոզուայի համոզմամբ, դրանք ևս շրջագիր ծածկագրության մուշկեր կարելի է համարել (Թ. Ջոզուա - բանավոր հաղորդում, 03.07.2021 թ.):
Օտարպետու վիճագրերում հանդիպող շրջագրի հետաքրքիր օրինակ է Բայբուրդի վաղմիջնադարյան եկեղեցու ընկած քարերի վրա նախիջևանագետ Արզան Այվազյանի հայտնաբերած հունարեն բեկորային արձանագրությունը («Առողջություն», «Երանություն»), որը, ըստ մասնագետների, «քանդակված է վիճագրության մեջ սակավ կիրառելի հայելատիպ եղանակով» (տե՛ս **Այվազյան Ա.**, Հայաստանի հունարեն վիճագրությունները և 18-21-րդ դդ. 10-ական թվականների հունական համայնքը, Եր., 2021, էջ 67):
24 Տե՛ս **Սաղումյան Ա.**, Ծածկագրությունը և զարդագրությունը հայ վիճագրերում, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1979, N 9, էջ 65-66:
25 Տե՛ս **Աբրահամյան Ա., Շահինյան Ա.**, Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագիրը և նրա վերծանությունը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1975, N 3, էջ 113-125:
26 Տե՛ս ԴՀԿ, պրակ X, Շիրակի մարզ, կազմեց **Ս. Բաղխուդարյան**, Եր., 2017, էջ 71, արձ. 104:

նագրի «Գիրքս այս տղայ կարդացընելոյ, որ գան ի յուսումն գրոց» գլխում այբուբենի՝ աջից ձախ գրությամբ պատկերումը²⁷ նախ երկայուն՝ չորս տառ (դ-ա, ը-ե և այլն), այնուհետ չորս այուն՝ երկու տառ (բ-ա, դ-գ և այլն) սկզբունքով (նկ. 4):




Նկ. 4. Հայերենի այբուբենն ըստ սյունակների՝ աջից ձախ գրությամբ (ՄՄ ձեռ. 1869, 387ա)

Գ. Հայերեն վիճագրերում վկայված նմանօրինակ այլ ծածկագրեր


Այժմ տեսնենք, թե հայերեն վիճագրերում շրջագիր ծածկագրության այլ օրինակներ հայտնի՞ են: Իբրև այդպիսին հատկանշելի է ՀՀ Լոռու մարզի **Կուրթան** գյուղի միջնադարյան գերեզմանոցում պահպանված 1086 թ. խաչքարի արձանագրությունը (նկ. 5ա, բ): Գիրը բոլորում է խաչասալի շրջանակը, որի ստորին հատվածն ամբողջությամբ գրված է աջից ձախ, գլխիվայր և շրջված. «† ՇԼԵ. (1086) թվականիս Հայոց, լի թագաւորուլւ թելանյն Կուրիկէի, հարազաւտ եղբարք Սարգիստ, Դաւիթո, Գորգի, նորոգեցաք զԱբ. **գԳորգս (Գէորգս)**՝ բարէխոս ոգոց մերոց (ընդգծվածը ծածկագրված հատվածն է – Ա. Հ.)»²⁸: Տեղին են նկատել նախորդ ուսում-

27 Տե՛ս ՄՄ ձեռ. 1869, 387ա-90բ: Ա. Աբրահամյանը թերևս հենց սա նկատի ունի, երբ նշում է, որ շրջագիր ծածկագրությունը դասավանդվել է հայ գրչության դպրոցներում (տե՛ս Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, էջ 268):
28 Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 65. [Շահինյան Ա.] Հայաստանի միջնադարյան կողողային հուշարձանները. IX-XIII դդ. խաչքարերը, Երև., 1984, էջ 38. Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 319, ԴԿԿ, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ա. Բարխուդարյան, Կ. Դաֆարդյան, Ա. Սարգսյան, Երև., 2012, էջ 438-439, արձ. 995:

նասիրողները, որ նորոգված Ս. Գորգը (Գևորգ) թերևս խաչքարից ոչ հեռու գտնվող ավերակ մատուռն է:



Նկ. 5ա, բ. Կուրթանի
1086 թ. խաչքարը
(լսնկ.՝ Ն. Նալբանդյանի, 2021 թ.,
գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)



Նկ. 6ա, բ. Լիճքի 1456 թ. խաչքարը
(լսնկ.՝ Հ. Պետրոսյանի, 2008 թ.,
գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)


Ժամանակագրորեն հաջորդը **Թանահատի վանքի** բազիլիկ եկեղեցու գավթի հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված խաչքարի ստորին կեսն է, որտեղ պահպանվել են թվականը՝ ՈԼ. (1180), և բուն արձանագրության ավարտը, որի վերջին բառը շրջագրված է, միայն թե ոչ բոլոր տառերն են շրջված (նկ. 7ա, բ). «...յիջեայ ի քում / **գալըստեղայնն**, թվինյ ՈԼ.¹(1180)»²⁹: Վերջին տարիներին քարը՝ վնասվել, և թվականի Լ. (30) տասնավորը կորսվել է:



Նկ. 7ա, բ. Թանահատի վանքի խաչքարի ստորին կեսը, 1180 թ.
(լսնկ.՝ արտատպված Ի. Ղարիբյանի «Գլաձոր» գրքից, նկ. 56,
գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

29 Տե՛ս **Ղարիբյան Ի.**, Գլաձոր. տեղադրությունը, պեղումները, վիճակի արձանագրությունները, Եր., 1983, էջ 145-146, **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 319:

Առավել հետաքրքիր է Ս. Էջմիածնի միաբան, բանասեր **Գալուստ Տեր-Մկրտչյանի** վերծանած Սևանավանքի՝ 1448 թ. խաչելության տեսարանով թևավոր խաչքարի արձանագրությունը, որի միջանկյալ հատվածը աջից ձախ գրությամբ շրջագիր է (նկ. 8ա, բ): Ներկայումս Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրված³⁰ այդ կոթողի՝ եզերագարդ հանդիսացող վիճագրի բովանդակությունը հետևյալն է. «Սա է Փր/կիչ աշխար/հի եւ յոյս ու/հաւատացելոց./որք երկրպա/գէք զԿարայալէյա քլախլանայ աղ/աւթս յիշեցէք./զ Գրւիգորյ կազմող./ՊՂԷ. (1448)»³¹:



Նկ. 8ա, բ. Սևանավանքի թևավոր խաչքարը, Գրիգոր կազմող, 1448 թ. (այժմ՝ ՀՊԹ-ում, լսնկ. և գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2019, 2021 թթ.)

Ծածկագրված է միայն ընդգծված հատվածը, ինչի հավանական պատճառը, ըստ Գ. Տեր-Մկրտչյանի, **Կարապետ քահանայի** ցանկությունն է: Մյուս կողմից էլ ուսումնասիրողը տարակուսում է՝ ինչու պետք է անձը, որը խնդրում էր իրեն հիշել աղոթքներում, ցանկանար իր անունը ծածկագրել: Այս դեպքում նա առաջադրում է երկրորդ վարկածը, այն է՝ գրիչը,

30 Նախորդ ուսումնասիրողներից Ս. Բարխուդարյանն ու Պ. Հակոբյանը կարծել են, թե խաչքարն անհետացել ու ոչնչացվել է (տես **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 148, **Տեր-Մկրտչյան Գ.**, Աջից ձախ հայ գրություն, «Հայագիտական ուսումնասիրություններ», գիրք Ա, կազմեցին և խմբագրեցին Պ. Հակոբյան, Է. Պիվազյան, Եր., 1979, էջ 523, ծնթ. 5), մինչդեռ այն խնամքով պահվում է Հայաստանի պատմության թանգարանում և վերջերս ներկայացվեց նաև Նյու Յորքի «Մետրոպոլիտան» արվեստի թանգարանում կայացած «Հայաստան» ցուցահանդեսի ժամանակ (տես Armenia. Art, Religion, and Trade in the Middle Ages, edited by **Helen C. Evans**, New Haven and London, 2018, էջ 185):

31 Տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 79, ծնթ. 1 (տարընթերցումներով), **Տեր-Մկրտչյան Գ.**, նշվ. աշխ., էջ 431-432: Տես նաև **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, էջ 669 (հետևելով Գ. Տեր-Մկրտչյանին խաչքարագործի անունը **Ջաքար** է կարդացել), «Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների», պրակ 1, Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատասիրությամբ **Ե. Մուշեղյանի**, Եր., 1964, էջ 53, արձ. 8, **Արրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, էջ 269, **Ուոլնի** Հայկական ծածկագրություն, էջ 76, **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 319, **Խաչերեան Հ.**, Խաչքար. պատկերագիրք, Շենգեն, 2017, էջ 112-113:

ըստ ամենայնի, ասորերենին ծանոթ ու վարժ է եղել, իսկ ասորական գիրն աջից ձախ է³²: Դրան ի պատասխան՝ Հր. Աճառյանը նկատում է, որ «եթե տարօրինակ գտնենք Կարապետ քահանայի հիշատակության ծածկագիր լինելը, տարօրինակ և ավելի տարօրինակ պիտի գտնենք նաև բոլոր ծածկագրերը...»³³, ուստի միակ բացատրությունը, ըստ լեզվաբանի, տգետների համար գիրն անհասկանալի դարձնելն էր, քանզի հենց նրանք էին «անունն ու հիշատակը եղծողները»³⁴: Այլ տեսակետ ունի Հ. Պետրոսյանը, ըստ որի՝ ինչպես այս, այնպես էլ նախորդ խաչքարերի վիմագրերում վարպետները ծածկագրման նպատակ չեն ունեցել, այլ ապահովել են նշված հատվածների՝ աջից ձախ ընթերցումը³⁵: Կարծում ենք՝ պետք է հաշվի առնել այն, որ ներկայացված վիմագրերում գործ ունենք ոչ միայն աջից ձախ գրության, այլև շրջված՝ հայելային տառաձևերի հետ, ինչը, անշուշտ, պետք է ծածկագրման եղանակ համարել:

Աջից ձախ գրությամբ շրջագիր ծածկագրություն է պահպանվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի **Լիճք** գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու³⁶ արևելյան պատի հյուսիսային մասում՝ ներքուստ ագուցված 1456 թ. խաչքարի քիվին: Այս դեպքում ևս աջից ձախ շրջագիր է միայն վիմագրի վերջին՝ քիվի վրա ամփոփված հատվածը (տե՛ս նկ. 6ա, բ): Խաչքարը կանգնեցվել է Իշխանի որդի ոմն Ճանտարի կողմից՝ տասնութ տարի ավեր մնացած գյուղը շենացնելու և տանուտրություն (նախորդ հրատարակչի ընթերցմամբ՝ «իշխանութիւն») անելու առթիվ. «Անուն ՉՄ, ես՝ Ճանտարս, Իշխանայ որդի Հէր/եցի, կանկն/եցի գխաչս / փրկութեան՝ հոգւոյ՝ իմոյ, ԺԸ. (18) տարի՛ գեղ/ս ււեր շինեցի / լե՛ւ՛ տանուտրութիւն արի, ով որ հանդիպի/ք ..., ԶԵ. (1456)»³⁷: Նկատենք, որ մասամբ ծածկագրված վիմագրերում միայն բարեխոսության, ընթերցողների կողմից հիշման ու հանդիպման հատվածներն են գաղտնագրվել, ինչը, կարծում ենք, պատահական չէ:

Շրջագիր ծածկագրության մեկ այլ նմուշ էլ մեզ է հասել **Հաղբատավանքի** մեծ գավթի տապանաքարերից (նկ. 9ա, բ): Այս դեպքում ծածկագրված է ամբողջ տապանագիրը, որում վկայված է ննջեցյալի՝ **Ղուկաս վարդապետի** անունը. «Այս լէ՛յ հալնգիւստ Ղուկասս վաւրդայալետոյին»³⁸:

32 Տե՛ս **Տեր-Մկրտչյան Գ.**, նշվ. աշխ., էջ 433:

33 **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, էջ 669:


34 Նույն տեղում:

35 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 319:

36 Հ. Պետրոսյանն այս խաչքարը տեղորոշում է Ս. Աստվածածին մերձակա Ծաղկեվանքում (տե՛ս նույն. տեղում, նկ. 275):

37 ՂԿԿ, պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց **Ս. Բարխուդարյան**, Եր., 1973, էջ 144, արձ. 589:

38 **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, էջ 296, նույնի՝ Հայկական ծածկագրություն, էջ 77: Շրջված տառերով մեկ այլ տապանագիր էլ պահպանվել է հին Շինուհայրի «խաչեր» գերեզմանոցում, որտեղ ծածկագրվել է «Այս է հանգիստ Նասիպին» արձանագրությունը (տե՛ս ՂԿԿ, պրակ II, էջ 56, արձ. 143):



Նկ. 9ա, բ. Հաղբատավանքի գավթի շրջագիր տապանագիրը
(լսնկ.՝ արտատպված ԴՀՎ, պր. IX, նկ. 291, գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

13-րդ դարով թվագրվող արձանագրության առաջին հրատարակիչ **Կարո Ղաֆաղարյանը**, որը Հաղբատի վիմագրերն ընդօրինակելիս մեծապես օգտվել է Հովհաննես Ղրիմեցու ձեռագիր աշխատությունից³⁹, ննջեցյալի անունը **Մկրտիչ** է կարդացել՝ միաժամանակ նշելով, որ իրեն հայտնի չէ տապանագրերում ծածկագրին դիմելու պատճառը, քանի որ «եթե Մկրտիչ վարդապետի անունը հրապարակավ տալու իրավունք չլիներ, այդ դեպքում նրան գավթի ներսում չէին թաղի»⁴⁰: Չհամաձայնելով Գ. Տեր-Մկրտչյանի այն տեսակետին, թե նման գրության հիմքում կարող էր ասորական գրի ավանդույթը լինել, Կ. Ղաֆաղարյանն առավել հավանական է համարում, որ դա կարող էր կիրառվել գրիչների կողմից «լոկ հետաքրքրություն շարժելու համար»⁴¹:

Նշենք, որ Կ. Ղաֆաղարյանի վերծանությունը «Դիվան հայ վիմագրության» Լոռվա պրակում վերանայվել և ընթերցվել է «Այս հալնյգիստ է Կարապետի»⁴², մինչդեռ լուսանկարի հիմամբ մենք ձիշտ ենք համարում Ա. Աբրահամյանի վերծանությունը, ըստ որի՝ ննջեցյալը Ղուկաս վարդապետն է:

Վերոբերյալ օրինակները պարզում են, որ հայ իրականության մեջ ծածկագրման հիմքում, ըստ ամենայնի, անուններն անեղծ պահելն ու ոչ բոլորին հասանելի դարձնելն էր: Միջնադարում գրի և հիշատակի ուժն այնքան զորեղ է եղել, որ մարդը «մի ողորմի»-ի արժանանալու, ընթերցողների ու այցելուների աղոթքներում հիշվելու և հիշատակված լինելու համար պատրաստ էր անգամ իր անունը քողարկելու և գաղտնագրելու (անշուշտ, նաև կենդանության օրոք կարող էր նման ցանկություն հայտնել): Այդպես նա կարծես «ապահովագրում» էր իր հիշատակը, որ իրենից հետո այն չխաթարվի ու մոռացության չտրվի, իսկ ինքն անմահ մնա ու հիշվի սերնդեսերունդ:

Պետք է փաստել, որ հայ վիմագրությանը հայտնի հայերեն շրջագիր ծածկագրերի թիվն ավելացավ նաև **Տաթևի վանքի** 1537 թ. օրինակով:

39 Կ. Ղաֆաղարյանի հաղորդմամբ՝ Հովհաննես Ղրիմեցին անձնանունը սխալմամբ կարդացել է **Մինաս** և չի հիշատակել տապանագրի շրջագիր լինելը (տես **Ղաֆաղարյան Կ.**, Հաղբատ. ձարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ 182):

40 Նույն տեղում, էջ 181:

41 Տես նույն տեղում:

42 ԴՀՎ, պրակ IX, էջ 168, արձ. 291:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս հավաստել, որ ծածկագրումը հիշատակված եպիսկոպոսների ցանկությունն է եղել, որոնք, ըստ ամենայնի, ուխտի են գնացել Տաթևի վանքապատկան Գեղարքունիքի թեմից և ինչ-որ նվիրատվություն արել վանքին: Իր հնագրական ոճով ու անհարթ տողագծերով արձանագրությունը հար և նման է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 1532 թ. նվիրատվական վիմագրին, ինչից ելնելով՝ կարելի է հավանական համարել, որ ծածկագրման հեղինակն ու գրիչն այդ վիմագրում հիշատակված Ներսես արեղան է:

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիմագրությունն ու ձեռագրագիտությունը: Ութ գրքի և յոթ տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Summary

A NEWFOUND CRYPTOGRAPHY OF TATEV MONASTERY

And other similar epigraphs

Arsen E. Harutyunyan

Candidate of Sciences in History

Key words – Tatev monastery, St. Paul-Peter Church, mirror-writing cryptography, epigraph, khachkar (cross-stone), decipherment, visitor-donor, bishop.

Tatev monastery is one of the famous historical, religious-cultural centers of medieval Armenia, whose epigraphic inscriptions have a great importance for the study of the history of Armenia. Numerous epigraphs are preserved on the walls of churches and memorial monuments of the monastery and many of them remain unpublished till today. A mirror-writing cryptography dated to 1537 is preserved on the southern wall of St. Paul-Peter Cathedral of the monastery, whose decipherment has been the main occasion of this publication. The study revealed the names of bishops Ter Anton, Ter Stepanos and Father Kirakos – most likely visitor-donators who visited Tatev monastery as a pilgrim and gave some donation, for which their names were allowed to be mentioned on the walls of the church as the “Book of Life”. In the result of this discovery, the number of Armenian mirror-

writing cryptographs was added by one more (as they are known from Kurtan, Tanahat monastery, Litchk, Sevanavank, Haghpatavank etc.).

The study confirms that the desire to codify belonged to the bishops, who more likely came to Tatev monastery from the diocese of Gegharkunik. The paleographic features and uneven lines of the inscription have numerous similarities to the donative inscription of St. Gregory the Illuminator Church dated to 1532, on the basis of which it can be assumed, that the author and scribe of the newfound cryptography is the same monk Nerses, who is evidenced at the end of the epigraph of the abovementioned church.

Резюме

НОВОНАЙДЕННАЯ КРИПТОГРАММА ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ

И другие аналогичные эпитафические надписи

Арсен Э. Арутюнян
Канд. ист. наук

Ключевые слова - Татевский монастырь, Собор Святых апостолов Павла и Петра, криптография, надпись, хачкар (крест-камень), расшифровка, посетитель-даритель, епископ.

Татевский монастырь - один из известных исторических и культурно-духовных центров средневековой Армении, исследование эпитафических надписей которого имеет очень важное значение для истории Армении. Здесь, на стенах церквей и других монументальных памятников, сохранились многочисленные надписи, большая часть которых до настоящего времени не изучена и не опубликована. На южной стене главного храма монастыря - Собора Святых апостолов Павла и Петра - сохранился интересный образец вписанной в круг криптограммы, датированной 1537 годом, расшифровке которой и посвящена данная публикация. При изучении криптограммы были обнаружены имена епископов Антона, Степаноса и Киракоса, которые являлись, судя по всему, посетителями-дарителями храма: они совершили паломничество в монастырь, сделали определенные пожертвования и взамен получили право записать свои имена на стенах церкви словно в «книге жизни». Документирование этой криптограммы позволило пополнить собрание

подобных известных памятных надписей в монастырях Куртана и Личка, в Танаатском, Севанаванкском и Ахпатском монастырях и др.

Результаты исследования позволяют утверждать, что криптирование (шифрование) имен было проведено по желанию самих епископов, по-видимому, пришедших из епархии Гехаркуника в качестве паломников в Татевский монастырь. Палеографический стиль, которым исполнена криптограмма, и беспорядочное расположение отметок строк в целом имеют сходство с дарительной памятной надписью 1532 года на стене соседней церкви Св. Григория Просветителя. На основании проведенного нами исследования можно предположить, что автором и резчиком обеих криптограмм является монах Нерсес.

REFERENCES

1. “Hatkanshakan ts’uts’ak t’angaranayin zhoghovatsuneri”, prak I, Hayeren ardzanagrut’yamb ararkaner, ashkhatasirut’yamb` Y. **Musheghyani**, Yer., 1964 (**In Armenian**).
2. **Abrahamyan A.**, Haykakan tsatskagrut’yun, Yer., 1978 (**In Armenian**).
3. **Abrahamyan A.**, Hayots’ gir yev grch’ut’yun, Yer., 1973 (**In Armenian**).
4. **Abrahamyan A., Shahinyan A.**, Artsvaniki hayeren norahayt tsatskagirè yev nra vertsanut’yunè, “Patmabanasirakan handes”, Yer., 1975, N 3, èj 113-125 (**In Armenian**).
5. **Achařyan H.**, Hayots’ andznanneri bararan, hat. 5, Yer., 1962 (**In Armenian**).
6. **Achařyan H.**, Hayots’ greřè, Yer., 1984 (**In Armenian**).
7. **Alishan Gh.**, Sisakan. teghagrut’iwn Siwneats’ ashkharhi, Venetik, 1893 (**In Armenian**).
8. **Ayvazyan A.**, Hayastani hunaren ardzanagrut’yunnerè ev 18-21-rd dd. 10-akan t’vakanneri hunakan hamaynk’è, Yer., 2021 (**In Armenian**).
9. **Barkhudaryan S.**, Geghark’unik’i melik’nern u tanutererè èst Tat’evi vank’i mi p’astat’ght’i, “Banber Matenadarani”, hat. 8, Yer., 1967, èj 191-227 (**In Armenian**).
10. **Barkhudaryan S.**, Mjnadaryan hay chartarapetner yev k’argorts varpetner, Yer., 1963 (**In Armenian**).
11. DHV (Divan hay vimagrut’yan), prak II, Gorisi, Sisiani yev Ghap’ani shrjanner, kazmets’` S. **Barkhudaryan**, Yer., 1960 (**In Armenian**).
12. DHV (Divan hay vimagrut’yan), prak IV, Geghark’unik’. Kamoyi, Martunu yev Vardenisi shrjanner, kazmets’` S. **Barkhudaryan**, Yer., 1973 (**In Armenian**).
13. DHV (Divan hay vimagrut’yan), prak IX, Lořu marz, kazmets’in` S. **Barkhudaryan, K. Ghafadaryan, S. Saghumyan**, Yer., 2012 (**In Armenian**).
14. DHV (Divan hay vimagrut’yan), prak X, Shiraki marz, kazmets’` S. **Barkhudaryan**, Yer., 2017 (**In Armenian**).
15. **Fedorova Je.**, Latinskaja epigrafika, M., 1969 (**In Russian**).
16. **Ghafadaryan K.**, Avani yerklezvyan tsatskagir ardzanagrutyunè, Yer., 1945 (**In Armenian**).
17. **Ghafadaryan K.**, Haghbat. chartarapetakan karuts’vatsk’nerè yev vimakan ardzanagrut’yunnerè, Yer., 1963 (**In Armenian**).
18. **Ghafadaryan K.**, Yerevan. mjnadaryan hushardzannerè yev vimakan ardzanagrut’yunnerè, Yer., 1975 (**In Armenian**).

19. **Gharibyan I.**, Gladzor. teghadrut‘yuně, peghumnerě, vimagir ardzanagrut‘yunnerě, Yer., 1983 **(In Armenian)**.
20. **Harut‘yunyan Kh.**, Hayeren dzerageri hishatakarannerě, Yer., 2019 **(In Armenian)**.
21. **Karakhanyan G., Safyan P.**, Syunik‘i zhayrapatkernerě, “Hayastani hnagitakan hushardzannerě”, hat. 4. Zhayrapatkerner, prak I, Yer., 1970 **(In Armenian)**.
22. **Khach‘erean H.**, Khach‘k‘ar. patkeragirk‘, Shenzen, 2017 **(In Armenian, In English, In French)**.
23. **Korostovcev M.**, Jegipetskij jazyk, M., 1961 **(In Russian)**.
24. **Movsisyan A.**, Nakhamashtots‘yan Hayastani grayin hamakargerě, Yer., 2003 **(In Armenian)**.
25. **Petrosyan H.**, Khach‘k‘ar. tsagumě, gortsaruyt‘ě, patkeragrut‘yuně, imastabanut‘yuně, Yer., 2008 **(In Armenian)**.
26. **Saghumyan S.**, Tsatskagrut‘yuně yev zardagrut‘yuně hay vimagrurum, “Lraber” has. git., Yer., 1979, N 9, ěj 61-77 **(In Armenian)**.
27. **Shahinyan A.**, Hayastani mijnadaryan kot‘oghayin hushardzannerě. IX-XIII dareri khach‘k‘arerě, Yer., 1984 **(In Armenian)**.
28. **Tēr-Movsisean M.**, Ardzanagrut‘iwnner Tat‘ewi vank‘i yew shrjakayk‘i, “Yōduatsneri zhoghovatsu”, hratarakut‘ean patrastets‘` **G. Tēr-Vardanean, S. Ējmiatsin**, 2010, ěj 279-297 **(In Armenian)**.
29. **Tēr-Movsisean M.**, Haykakan yerek‘ mets vank‘eri` Tat‘ewi, Haghartsni yew Dadi yekeghets‘inerě yew vanakan shinut‘iwnnerě, Yerusaghēm, 1938 **(In Armenian)**.
30. **Ter-Mkrтч‘yan G.**, Ajits‘ dzakh hay grut‘yun, “Hayagitakan usumnasirut‘yunner”, kazmets‘in yev khmbagrets‘in` **P. Hakobyan, Ē. Pivazyanyan**, Yer., 1979, ěj 429-434 **(In Armenian)**.